ՇՆՈՐՀՔ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԳԱԼՈՒՍՏՅԱՆ
(Պատրիարք հայոց Կ. Պոլսո)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱՆ ՎՐԱ

Ավագ շաբաթը Հիսուսի կյանքին կարեվորագույն շրջանն է: Մինչ ավետարանիչները մեր Փրկչին երեք տարիներու գործունեության և քարոզության կհատկացնեն իրենց գրքերուն գրեթե երկու-երրորդը, անդին Հիսուսի կյանքի վերջին յոթնյակին կվերապահեն իրենց գրքերուն գրեթե մեկերրորդը: Որովհետև Ավագ շաբաթը իր մեջ կհամադրե Հիսուսի կյանքի վերջին ութ օրերու կարևորագույն խոսքերը, գործքերը և տնօրինությունները:

Սրտահույզ այս դրվագներու ընդմեջեն կհայտնվի Աստված իր անհուն սերովը, իսկ մարդը՝ իր անսահման չարությամբը: Ոչ մեկ ատեն Աստված ու մարդը այնքան սերտորեն ու այնքան դրական ու ժխտական դիրքավորումներով իրարու դեմ հանդիման եկած են, որքան Հիսուսի կյանքին այս վերջին օրերուն, երբ Աստված կհայտնվի մարդկային սովորական չափանիշներե վեր ու տարբեր գործելու Իր տնօրինություններով. իսկ մարդը՝ ամեն հովին—լավ կամ վատ—իր առագաստը բանալու հեղհեղուկ տրամադրությամբը: Վերջապես այս օրերուն Աստված կհայտնվի մարդերու փրկության համար չարչարվելու իր անընմբռնելի խորհուրդը. իսկ մարդը՝ աստվածաչարչար դառնալու իր անսրբագրելի հիմարությամբը: Ուրեմն՝ Աստուծո անհուն սիրույն և խորագույն խորհուրդներու հայտնության շաբաթն է Հիսուսի կյանքին վերջին յոթնյակը:

Զարչարանքի և Զարության շաբաթը:
Հաղթանակի և Հարության շաբաթը:

*
* *

Եկեղեցական ու տոնացուցական տեսակետե դիտված՝ համեմատաբար կարճ շրջան մըն է Ավագ շաբաթը տարվան 365 կամ 366 օրերու մեջ. սակայն իր կրոնական տարողությամբ տարվան կարևորագույն յոթնյակն է համայն քրիստոնեության համար:

Արևմտյան քրիստոնյաները զայն կկոչեն **«Սուրբ շաբաթ»**. իսկ արևելյաններ՝ **«Ավագ շաբաթ»**: Իրականության մեջ ան երկուքն ալ է: ՍՈՒՐԲ է, որովհետև տարբեր է տարվան մյուս շաբաթներեն, և սուրբ տնօրինություններ կկատարվին անոր մեջ: ԱՎԱԳ է, որովհետև մեծ տարողությամբ խոսքեր, դեպքեր և խորհուրդներ տեղի կունենան իր մեջ: Ինչպես շատ մը ուրիշ պարագաներուն՝ այնպես ալ այստեղ, Արևելք և Արեվ-

մուտք զիրար կլրացնեն և ոչ թե իրարու կհակասեն:

Ավագ յոթնյակի տոնակատարությանց օրերուն՝ եկեղեցին ոչ միայն կհիշատակե Հիսուսի վերջին տնօրինությունները աստվածաշնչական ընդարձակ ընթերցվածներով և շարականներու սրտաշարժ մեղեդիներով, այլ նաև երբեմն կվերարտադրե զանոնք սրբազան ՏՐԱՄԱՅԻ մը սրտառուչ ձևին տակ: Ամբողջ շաբաթ մը, հաճախ հև ի հև ընթացող շարժանկարի մը վերիվայրումներով, կտրվի պատեհությունը հավատացյալին սերտորեն հետևելու իր Փրկչի կյանքի վերջին խորհուրդներուն, ապրելու համար անոր հետ հուզումի, վիշտի և ուրախության պահեր:

Ավագ շաբթվան տոնակատարության հասարակաց երևույթը աստվածաշնչական ընթերցվածներուն ճոխությունն է: Հատուկ միտում կա, կարծես, տոնացույցը կազմողներուն կողմե, որչափ կարելի է երկար պահել հավատացյալը եկեղեցիին մեջ, լեցնելու համար անոր միտքը ս. գրական գրեթե անհատնում ընթերցվածներով, որոնք կա՛մ այն օր պատահած դեպքերու մասին են, կա՛մ նույն օրը Հիսուսի կողմե խոսված քարոզներ, առակներ ու հրաժեշտի մտերիմ զրույցներ են, և կա՛մ օրվան խորհուրդին հետ հեռվեն ու մոտեն առնչություն ունեցող Հին Կտակարանեն վերցված կտորներ են:

Յոթնյակը կսկսի հաղթանակով և կավարտի հաղթանակով: Միջանկյալ մասը կյանքն իսկ է, իր ելևէջներով և վերիվայրումներով, իր գուպարներով և գայթումներով, ուրախության պոռթկումներով լուսավոր և տառապանքի հառաչներով վիրավոր: Քիչ անգամ մարդկության հոգիի հակադիր հակումները այնքան շեշտորեն իրարու կհաջորդեն ու իրարու կբախին, որքան՝ այս օրերուն:

Համամարդկային տարողությամբ ծանրաբեռն շաբաթ մըն է Ավագ յոթնյակը:

Ծաղկազարդ

Ավագ շաբաթի վարագույրը կբացվի ժողովրդային ազնիվ տրամադրություններու սխրայի պոռթկումով մը: Ընկերային կյանքի գրեթե բոլոր երևույթները ներկա են այստեղ. ուրախություն, երգ, հանդես մեկ կողմեն, ու լաց, նախանձ և ընկերային տարբեր ըմբռնումներու բախումներ մյուս կողմեն:

Օրվան շքեղ այս անունը հատուկ է մեզի միայն: Հայ ժողովուրդի այն դիպուկ հորինումներեն՝ ուր իրը և անունը զիրար կգրկեն երջանիկ հարազատությամբ: Մյուս քրիստոնյաներ զայն կկոչեն «Արմավիրյաց կիրակի»: Իսկ անոր տոնացուցական պաշտոնական հորջորջումն է մեր մեջ՝ **«Գալուստ Քրիստոսի Աստուծոյ մերոյ յաւանական յԵրուսաղէմ»:** «ԾԱՂԿԱԶԱՐԴ» տիտղոսը մեր ժողովուրդին գյուտն է, հոգ չէ թե հին բնապաշտական տոնի մը անունը եղած ըլլա այդ, և կամ հատկապես հորինված՝ այս տոնին համար: Կարևորը այն երջանիկ մեկտեղումն է որ պատահած է անունին և ավետարանական ծանոթ դրվագին միջև: Եկեղեցին ալ տեսնելով այս իմաստալից զուգադիպությունը պաշտոնապես որդեգրած է զայն, ինչպես ըրած է Տյառնընդառաջի, Զատիկի և Վարդավառի պարագաներուն, որոնք ևս ժողովրդային անվանադրություններ են իրենց ներկայացուցած տոներուն համար:

Մեր ժողովուրդը սերտ նմանություն մը նշմարած է Հիսուսի Երուսաղեմ հաղթական մուտքին և գարնան բնութենեն ներս հաղթական ծավալումին միջև: Արդարև այս տոնախմբության օրերուն բնության գրեթե հանկարծական պոռթկալը ծաղիկներու երգող երանգներով, ու ծառերուն փառավորվիլը ծաղկյա պայծառ պատմուճաններով, տված է պատկերը հայ ժողովուրդին կոչելու համար Հիսուսի փառավորության տոնը ԾԱՂԿԱԶԱՐԴ:

Իրավամբ Հիսուսի Երուսաղեմ հաղթական մուտքը Անոր մեծության ծաղկումն է: Անոր աստվածային հեղինակության պարուրված կոկոնին բացվիլն է: Անոր ցարդ անտեսանելի մնացած փառքին ճառագայթումն է:

Հիսուս միշտ խուսափած է սովորական փառքի ցույցերեն, պարզ այն պատճառով որ ինք «Փառաց Տերն» էր արդեն կամ՝ «Փառաց Թագավորը», սաղմոսի ծանոթ արբասացությամբ, զոր կլսենք ամեն ս. պատարագի Վերաբերումին: Իսկական փառքը Հիսուսի մեջն էր, և Ինք Աստուծո փառքին արտացոլումն էր: Մեկը որ հարազատ ադամանդներ ունի իր գանձատուփին մեջ, կեղծ ադամանդներով չի հետաքրքրվիր: Բաց աստի Հիսուս այնքան լարված ու տարված էր կյանքի հիմնական և հավիտենական հարցերով, որ ժամանակ ու ախորժակ չուներ կյանքի հասարակ պսպղուն երևույթներու առջև կանգ առնելու:

Սովորական փառասիրության մասին կմտածեն միայն անոնք, որ զուրկ են իրական փառքը արտադրող ազդակներե: Մարդիկ, որոնք դատարկ մնացած են խոր իրագործումներե և ոգեղեն ներքին ապրումներե, պետք կզգան այդ դատարկությունը լեցնել արտաքին փայլով և ցուցանքով: Արտաքին փառքով տարվող մարդը ապա-

ցույցը տված կըլլա իր ներքին բուսիկության և պարապության:

Հիսուս հետևողական դատապարտող մըն էր ցուցանքի: Մարդկության պարգևած իր Նոր Սահմանադրության—Լերան Քարոզին—հիմնական հատկանիշներեն մեկը կկազմե այս: Կպատգամե Հիսուս այնտեղ. «Զգույշ եղեք բարիք ընելու ատեն. չըլլա որ ցույցի համար ընեք: Ողորմություն տալու ատեն փող մի հնչեցներ քու առջևեդ, ինչպես կեղծավորները կընեն, հավաքավայրերու և հրապարակներու վրա, որպեսզի մարդոցմե փառավորվին...»:

Եթե մարդ իրական ու հարազատ փառք ունի, հոգ չէ թե այդ ըլլա պզտիկ աստղի մը համեստ պլպլացումը, կամ մեծ աստղի մը պայծառ պսպղումը, կնշմարվի արդեն աչք ունեցողներու կողմե: Իսկ սև ակնոց գործածողներ չեն կրնար հանդուրժել լույսի պայծառության. կույրերն ալ արդեն չեն տեսներ. հետևաբար այլևս անիմաստ կդառնա այս կարգի մարդոց երևնալու մարմաջներ սնուցանելը: Փառք ըսվածը իրական մեծության մը շուքն է. բարության՝ փայլը. առաքինության ճառագայթը: Ձես կրնար չնշմարել պատարագի սեղանին վրա այրող մոմը: Հիսուս հարազատ փառքի սահմանվածներուն ուղղելով խոսքը կըսե. «Դուք աշխարհի լույսն եք... թող ձեր լույսը այնպես ճառագայթե մարդոց առջև, որ անոնք տեսնելով ձեր բարի գործերը փառավորեն ձեր երկնավոր Հայրը» և ոչ թե ձեզ (Մատթ. Է 14—16):

Իսկ իրեն համար ըսած էր Հիսուս առիթով մը. «Ես մարդոցմե փառք չեմ փնտրեր» (Հովհ. Ե 41):

Հակառակ այս բոլորին, սակայն, Հիսուս իր կյանքին մեջ առնվազն երկիցս ոչ միայն թույլ տվավ, այլ, այսպես ասած, մինչև իսկ ինք տնօրինեց որ փառավորվի նաև արտաքնապես և տեսանելի կերպով: Ինչո՞ւ երևութական այս հակասությունը:

Կանխենք ըսել, որ այս երկու պարագաներն ալ ուրիշներու օգտին համար արտոնվեցան. ավելի շիտակ՝ իր որոշ և կարևոր մեկ ուսուցումը գործնականորեն ևս հաստատելու համար եղան: Փառավորման այս երկու երևույթները կրնանք կոչել «ապրված կամ գործադրված առակներ». որովհետև իրենց նպատակով նույն են առակներու հետապնդած նպատակին հետ. այսինքն ծածկյալ կամ վերացական ճշմարտություն մը արտահայտել հորինված պատմությամբ մը կամ կյանքե առնված իրական դրվագով մը:

Հիսուսի կյանքին հետ առնչություն ունեցող այս առակավոր դրվագներեն կարելի է նկատել, օրինակ, իր մկրտությունը: Հիսուս պետք չուներ մկրտվելու, քանի որ մեղավոր մը չէր. սակայն մկրտվեցավ պարզապես օրինակ հանդիսանալու համար իր հետևորդներուն, և շեշտելու համար անհրաժեշտությունը մկրտության: Առաջքը առած եղավ ապագային ոմանց այն հավանական առարկության, թե քանի որ Հիսուս չմկրտվեցավ, մենք ալ անհրաժեշտ չենք տեսներ մկրտությունը: Հիսուս աշակերտներուն ոտքերը լվաց, ոչ թե որովհետև անոնք պետք ունեին լվացումի, այլ անոնց սորվեցնելու համար ծանոթ դասը: Հիսուս թզենի մը չորցուց, գործնականապես նախ հաստատելու համար հավատքի զորությունը, և ապա՝ սորվեցնելու համար այն ճշմարտությունը, թե բարի պտուղ տալու սահմանված մարդը, եթե տերևներով միայն զարդարված մնա, դատապարտված է չորնալու: Նման է նաև նպատակը վերև ակնարկված երկու փառավորումներուն, որոնցմե մեկը տեղի ունեցավ լեռան մը մենության մեջ, ի ներկայության իր աշակերտներեն միայն երեքին. իսկ երկրորդը բեմադրվեցավ Երուսաղեմի շրջանակին մեջ, ամենքի աչքին առջև: Ի՞նչ էր նպատակը այս վերջին բեմադրության:

Դոնբացեք

Ծաղկազարդի երեկոյին կատարված ԴՈՆԲԱՑԵՔԸ արտացոլումն է առավոտյան տոնախմբության՝ մեր հոգևոր աշխարհեն ներս: Երկուքն ալ մուտքի արարողություններ են: Մեկը կհիշատակե Հիսուսի հաղթական մուտքը ի քաղաքն Երուսաղեմ. իսկ մյուսը կպատկերացնե մեր խորհրդանշական մուտքը ի վերին Երուսաղեմ: Մեկը ընդելուզված է օվսաննաներու գովերգությամբ, իսկ մյուսը՝ «բաց մեզ Տէր զդուռն ողորմութեան» աղաչական ողբերգությամբ:

Հին ատեն այս արարողությունը կկատարվեր եկեղեցիեն դուրս, ավագ դռան առջև: Սակայն եղանակի խստությունները և այլազգիներու պատճառած տաղտուկները պարտադրած են, որ արարողությունը ապաստանի եկեղեցիեն ներս և իր մնայուն տեղը գրավե եկեղեցիի բեմին վրա:

Երուսաղեմի հայոց ս. Հակոբա տաճարին մեջ հատկապես՝ Դոնբացեքը կկատարվի բացառիկ հանդիսությամբ: Կվարագուրվին ոչ միայն Ավագ և քովնտի խորանները, այլ նաև բոլոր պատկերները: Ու բազմաթիվ են ս. Հակոբա տաճարի պատկերները և սեղանները: Յուրաքանչյուր ուխտավոր, փոխան նվիրատվության մը, պատրաստ կեցած է պատկերի մը կամ սեղանի մը առջև, վարագույրի չվանը ձեռքին և կսպասե վերջին շարականի սկսելուն, որպեսզի բանա իր վարագույրը, ստեղծելով արդարև հոգե-

Հայաստանի ՊԵՏԱԿԱՆ Գրադարան
Гос. Библиотека
ZOUZ-Арм.ССР
им. А. Мецнерца
Ս. ՄԵՍՐՈՊԻ ԱՆՎԱՆ

վոր ուրախության մթնոլորտ մը տանձարեն ներս:

Սրբազան տրամա մըն է Դոնբացեքը, օժտված հին սրբազան տրամաներու բոլոր տարրերովը: Կան այնտեղ երգասացություն, պաշտամունք, «Քորո», և վերջապես՝ «տիալոկ», այսինքն խոսակցություն երկու հոգիի միջև:

Տրամայի նախերգանքը կբաղկանա սաղմոսե և շարականե մը: Սաղմոսին (ճմէ) առաջին և վերջին՝ ինչպես նաև միջին տողերը կուտան բանալիները տրամային: Երեք հիմնական այդ տողերեն առաջինն է:

«Խոստովան եղերուք Տեառն, զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն Նորա»:

Աստուծո ԲԱՐՈՒԹՅՈՒՆԸ և ՈՂՈՐՄԱԾՈՒԹՅՈՒՆԸ հիմունքը կկազմեն ամբողջ տրամային:

«Զի բարի է, զի յաւիտեան է ողորմութիւն Նորա» նախադասությունը կկրկնվի իբրև հանգերգ նաև հաջորդող երեք տողերուն մեջ: Մենք դոնբաց կկատարենք որովհետև կհավատանք արդարև որ բարի է Աստված և Անոր ողորմությունը անսահման է: Այլապես անիմաստ պիտի ըլլար ամբողջ արարողությունը:

Բարությունը Աստուծո հիմնական և եզական հատկանիշն է: Բարի տիտղոսը Քրիստոս չուզեր որ գործածվի մինչև իսկ իրեն համար, որ իրականության մեջ մարմնացումն էր բարության:

Բարեմիտ և պատվիրանապահ երիտասարդ իշխանավոր մը օրին մեկը Հիսուսը «բարի վարդապետ» կոչած էր: Հիսուս պատասխանած էր անոր. «Ոչ ոք բարի է Աստուծմե զատ»: Բոլոր մյուս բարությանց, գտնվին անոնք մարդոց կամ բնության մեջ, աղբյուրը Աստված է: Աստված մշտաբուխ ակ է բարության, լույս հոսող և ջերմություն բաշխող արեգակին պես:

Աստուծո բոլոր գործերը բարի են, ինչպես կհաստատվի Աստվածաշունչի առաջին էջերուն մեջ: Աստված կստեղծե լույսը, և կտեսնե որ «բարի է», կստեղծվին երկինքը ու երկիրը և անոնց բոլոր զարդերը և ահա «բարի են»: Կստեղծվին բույսեր, թռչուններ, սողուններ, ձուկեր ու չորքոտանիներ և վերջապես մարդը, բոլորն ալ «բարի են»: Հապա ուրեմն բուսավ չարը, որ այնքան՝ ու երբեմն ավելի՝ շոշափելի է մեր կյանքին մեջ, որքան՝ բարին: Հարց մոն է ասիկա որ կրնա մեզ շեղեցնել մեր նուիրեն, և շատ հեռուներ տանիլ: Սակայն միայն այս առթիվ ըսենք, որ Դոնբացեքը կկատարվի մարդիկը չարիքեն փրկելու համար:

Սաղմոսի միջին բանալին նախադասությունն է,

«Ի նեղութեան իմում ես առ Տէր կարդացի, և Նա լուաւ ինձ յանդորր»:

Ու այս գաղափարը այլազան ձևերով կվերևի հաջորդող ութ տողերուն մեջ: Մարդը բարոյական նեղության մատնված է, պաշարված է ֆիզիքական ու բարոյական թշնամիներե: Ասոնցմե ազատվիլ կուզե: Թեման է ասիկա ամբողջ տրամային: Նեղությունը կամ ֆիզիքական ու բարոյական չարիքը ամեն մարդու բաժինն է. չկա մարդ որ զերծ ըլլա անոնցմե: Հաշիշ գործածելը արմատախիլ չըներ զայն, այլ մարդը կնետե զգայազուրկ վիճակի մեջ, որուն անցնելեն հետո ավելի ուժգին կզգա անոր դառնությունը և տաղտուկը: Ստոյիկյանությունը, քաջաբար կենալ ու կրելը, տառապանքի և նեղության դիմանալը, դարման չէ անոր: Էականը, փնտրվածը, անդորրություն գտնելն է: Հոգեվիճակ՝ զոր կրնանք ունենալ ոչ թե տառապանքեն կամ նեղութենեն ազատվելով, այլ՝ անոր խայթոցեն ու կսկիծեն: Սաղմոսերգուն զայն կգտնե «առ Տեր կարդալուն» մեջ. այսինքն Աստուծո աղաղակելով և իր նեղությունը Անոր առջև դնելով՝ Անկե ստացած իր անդորր հոգեվիճակի մեջ: Անկե հետո հաջորդ տողերուն մեջ կրնա ըսել այլևս հանդարտորեն.

«Երբ Տերը օգնականս է, այլևս երբեք չեմ վախնար. ի՞նչ կրնա ընել ինձի մարդը:

Բոլոր ազգեր (ամեն տեսակ նեղություններ) զիս պաշարեցին. սակայն Տիրոջ անունով վանեցի զանոնք (Բոլոր նեղությունները և տառապանքները):

Զիս շրջապատեցին մեղուներու պես, վառեցան, բորբոքեցան, այնպես՝ ինչպես: փուշերը կրակին մեջ. ու ես Տիրոջ անունով մերժեցի զանոնք:

Տերը իմ զորությունս և օգնությունս է. Ան իմ փրկությանս պատճառը եղավ:

Ցնծության ձայներ պիտի գան արդարներու տուներեն, որովհետև փրկված են անոնք:

Թեև Տերը ատեն մը արտոնեց որ նեղություններ վրաս խուժեն, և անոնցմով խրատեց զիս, բայց մահվան չմատնեց»:

Ու սաղմոսին վերջին տողը կուգա կնքել վերև ըսվածները և բանալ ճանապարհը արարողության հետապնդած կեդրոնական նպատակին. այսինքն արդարացած հոգվով մտնել հավիտենականության երանական հարկերեն ներս:

«Բացեք ինձի արդարներուն վերապահված դռները, մտնեմ անկե և խոստովանիմ ու հայտարարեմ Տիրոջ բարությունը և ողորմությունը»:

Սաղմոսին կհաջորդե «քորո»-ն, այսինքն խմբովին երգված շարական մը. **«Ծնորհեա**

մեզ Տէր արթնութիւն ընդ իմաստուն կուսանացն»: Ամբողջությամբ հորինված է տասը կույսերու և այլ համանման ավետարանական առակներու իմաստին վրա, որպեսզի «պայծառանան մեր հոգիներուն լապտերները, և բազմինք երկինքի արքայության կոչունքին, հրավիրյալներուն հետ»:

Կհաջորդե տրամայի երկու գլխավոր դերակատարներուն «տիալոկը»՝ երկկողմանի խոսակցությունը: Անոնցմե մեկը առաջնորդը ու խոսնակն է ժողովուրդին, որ կուզե «արդարության հարկերեն» ներս մտնել: Իսկ մյուսը Աստուծո խոսնակն է, որ կարծես մուտքի օրինավոր տոմսակ կպահանջե: Առաջինը «աղիողորմ ձայնով» կմեներգե. «Բաց մեզ Տէր»-ը: Թեև այս երգը և եղանակը մեր հոգևոր ու աշխարհիկ երգերուն ամենեն լալահառաչներեն է, բայց անոր մեջեն հանված է հուսահատության խավարը և տեղը դրված է հույսի և վստահության արևը, արցունքի կաթիլին մեջ դրված ծիածանին պես: Բառերը և եղանակը լավ գտած են զիրար. մարդուն մեղսամած և տառապագին հոգեվիճակը, և երգով հետապնդված նպատակը—փրկությունը—իբրեվ ժխտական ու դրական էլեկտրական երկու բևեռները, զուգահեռ կընթանան, արտադրելու համար հոգեկան անդորրության պայծառ լույսը:

Ազդված չերևիր կարծես ներսի Աստուծո խոսնակը «Բաց մեզ Տէր»-ի «աղիողորմ ձայն»-են, և անոր գրեթե հակադիր չորությամբը կըսե. «Ո՞վ են անոնք, որ բանամ. որովհետև ասիկա Տիրոջ դուռն է, և (միայն) արդարներուն վերապահված է ասկե մտնելը»:

Դուրսինը նույն քաղցրությամբ, նույն հավատքով և հարատևությամբ կշարունակե և մինչև իսկ կարբագրե Աստուծո խոսնակին մերժողական երանգ ունեցող պատասխանը ըսելով.

«Ոչ միայն արդարներ, այլ նաև մեղավորներ ալ կրնան մտնել անկե, խոստովանելե, ապաշխարելե և արդարանալե հետո»: Աստվածային խոսնակը կիջնե կարծես քչիկ մը իր պատգամավորի բարձրութենեն և կմտնե բացատրողի դերին մեջ. «սխալ չհասկցվինք մենք ըսել ուզեցինք»-ի իմաստ տալով իր խոսքին. թե՝ այն դուռը զոր կբախեք արդարև «երկինքի դուռն է, որ տրտմության հովիտեն կբացվի այն վայրին վրա, որ Աստված շնորհած է Ձեզի: Այս տեղը արդարներուն հանգստյան վայրն է, մեղավորներուն քավարանը, Քրիստոսի արքայարանը, հրեշտակաց բնակարանը, սուրբերու հավաքարանը, ապավենի տեղը և Աստուծո տունը»:

Ժողովուրդի խոսնակը սիրտ առած է իր շահած առաջին կետեն, և կշարունակե ավելի ինքնավստահ. «Ստույգ և ճշմարիտ են ըսածներդ, որոնք կակնարկեն մեր սուրբ եկեղեցիին, քանզի ասիկա մեր անարատ մայրն է. և անկե ծնած ենք իբրև լույսի և ճշմարտության որդիներ. ասիկա մեզի համար կյանքի հույսն է, անով կգտնենք մեր հոգիներուն փրկությունը, և ան է մեզի համար արդարության ճանապարհը, և անով կբարձրանանք Քրիստոսի և մեր երկնավոր Հոր»:

«Քորո»-ն կմիջամտե դարձյալ 10 կույսերու և ապաշխարանքի թեմայի վրա հորինված գեղեցիկ ուրիշ շարականով մը, որուն վերջավորության խումբը կաղաղակե. «հարսանեկան ուրախության կուզենք մասնակից դառնալ անմահ փեսային հետ, վառված լապտերներով»:

Կսկսի երկրորդ գործողությունը «Բաց մեզ Տէր»-ին: Աստուծո խոսնակը ներսեն կհայտարարե.

«Ահա կտեսնենք մեր Տերը, Քրիստոսը, որ բազմած է Սեղանին վրա և իրեն կկանչե իր կամքը կատարողները, ըսելով. «ուր որ ես եմ, այնտեղ պիտի ըլլա նաև ինձի հետևողը»»:

Ժողովուրդի խոսնակը կլրացնե գաղափարը, հաստատելով. «Աստուծո Որդվույն անապական արյունով գնված ենք ամենքս ալ. ուստի ցնծությամբ կօրհնենք մեր ազատարար Քրիստոսը, և կըսենք բոլորս միատեղ. «Փառք Քու ահավոր գալուստիդ, Տեր»: Ժողովուրդը երգով կընդլայնե Քրիստոսի գալստյան սպասումի գաղափարը ու կեզրակացնե. «Չըլլա որ դուրս մնանք իրենց լապտերները մարած հինգ կույսերու պես»:

Կհաջորդե երրորդ գործողությունը «Բաց մեզ Տէր»-ի: Երկինքի խոսնակը հանդիսավոր տոնով կձայնե. «Աստուծո ահավոր փոդր ահագին ձայնով կգոչե ըսելով. ահա փեսան կուգա, ելե՛ք դիմավորեցեք զԱյն»:

Ու ժողովուրդի առաջնորդը իր խնդրանքը ընդունված մարդու խաղաղ երանությամբ կըսե. «Ահավասիկ ես ու զավակներս, զորս Աստված տված է ինձի. կեցած ենք ամենքս ալ, և կսպասենք Քրիստոսի տեսության արժանանալու և լսելու համար Անոր երանավետ ձայնը»:

Աստուծո խոսնակը նույն հանդիսավորությամբ կհայտարարե վերջին պատգամը. «Արարիչ Աստուծո ձայնը կըսե. «Եկեք Հորս օրհնածները, ժառանգեցեք ձեզի համար աշխարհի սկիզբեն ի վեր պատրաստված արքայությունը»»:

Ժողովուրդի ներկայացուցիչը կկրկնե նախերգանք սաղմոսին վերջին տունը. «Բացեք ինձի արդարության դռները և մտնեմ

անկե, և խոստովանիմ ու հոչակեմ Աստուծո բարությունը և ողորմությունը»:

Կբացվեին այս կետին ի հնումն եկեղեցվո դռները և դուրսը սպասող ժողովուրդը խուռներամ կմտներ եկեղեցի «հոգևոր ուրախությամբ»: Իսկ ներկայիս կբացվին վարագույրները, իբրև խորհրդանշանները հավիտենական հարկերու դռներուն ու կպայթի ժողովուրդին երգը. «Զողորմութեան քո զդուռն բաց մեզ, Տէր, և արժանի արա զմեզ լուսեղէն յարկաց քոց ընդ սուրբս քո»: Հաղթանակած է Աստուծո ողորմությունը: Ու Ավետարանի օրվան ընթերցվածը կուգա դնել իր կնիքը, աշխարհի կատարածին և դատաստանի օրվան մեծ խորհուրդով լեցուն այս արբազան արարողության վրա:

«Հիսուս կաղաղակեր ու կըսեր. Ով որ ինձի կհավատա, միայն ինձի չէ որ կհավատա, այլ նաև Անոր, որ զիս ղրկեց: Եվ ով որ զիս կտեսնե, կտեսնե նաև զԱյն, որ զիս ղրկեց: Ես աշխարհ եկա իբրև անոր լույսը, որպեսզի ով որ ինձի հավատա, խավարին մեջ չմնա»:

(«Ավագ շաբաթ», Բեյրութ, 1974, էջ 3—4, 5—7, 21—25)